



ՆՈՒՆԵ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

**ԱրՊՀ-ի իրավաբանական ֆակուլտետի 2-րդ կուրսի մագիստրանտ,
Դատական նիստերի քարտուղար**

**ԻՐԱՎԱՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԻՊԵՐԻ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԸ**



Իրավահասկացողությունը իրավունքի ելքային վերաբերյալ որոշակի պատկերացումների ամբողջություն է: Հասկանալու համար, թե ինչ է իրավունքը և որն է նրա նշանակությունը հասարակական կյանքում, դեռևս հռոմեացի իրավաբանները ուշադրություն են դարձնում նրան, որ իրավունքը չի սահմանափակվում որևէ մեկ նշանակությամբ կամ հատկանիշով: Նրանք նշում էին, որ իրավունքն օգտագործվում է մի քանի նշանակությամբ.

1. Իրավունքը դա այն է, ինչը միշտ «արդար է ու բարի» (բնական իրավունք)

2. Իրավունքը դա այն է, ինչը որևէ պետության մեջ «օգտակար է բոլորին և շատերին» (քաղաքացիական իրավունք)

Ինչպես նշել է Արիստոտելը. «Իրավունքը, լինելով քաղաքական հարաբերությունների կարգավորող նորմ, պետք է ծառայի որպես արդարության չափանիշ»: «Իրավունքը հակասությունների ողջամիտ հավասարակշռություն է. չկա հավասարակշռություն, չկա իրավունք»: Իրավահասկացողությունը գիտական կատեգորիա է, որն արտացոլում է իրա-

վունքի ընկալման, ճանաչողության, իմացության և գնահատման վերաբերյալ մարդու նպատակաուղղված գործունեության ընթացքն և արդյունքը:

Իրավահասկացողության սուբյեկտը միշտ հանդես է գալիս մարդը իսկ օբյեկտը կարող է լինել իրավունքն ընդհանրապես, կոնկրետ հասարակության իրավունքը, իրավունքի ճյուղը, իրավունքի ինստիտուտը կամ առանձին իրավական նորմերը: Իրավական հասկացողության բովանդակությունը դա սուբյեկտների գիտելիքների մակարդակն է, իրենց իրավունքների և պարտականությունների, վարքագծի թույլատրելի սահմանների ու արգելքների վերաբերյալ: Իրավական մտքի զարգացման պատմության մեջ իրավահասկացողության վերաբերյալ ձևավորվել է 3 հիմնական հայեցակարգ.

1. Նորմատիվիստական
2. Սոցիոլոգիական
3. Բարոյական կամ բնական-իրավական

Նորմատիվիստական մոտեցման համաձայն իրավունքը դա հենց նորմերի համակարգ է, վարքագծի կանոններ, այսինքն՝ ամեն ինչ կախված է պետությունից: Սոցիոլոգիական մոտեցումը ձևավորվել է 20-րդ դարում և հիմնականում ամերիկյան իրավական մտքում: Այս մոտեցման համաձայն իրավունքը դիտվում է ոչ միայն որպես նորմ, որը սահմանվում է պետության կողմից, այլ որպես հասարակական հարաբերություն, որը ձևավորվում է հենց հասարակության մեջ: Այսինքն՝ որպես չափման միավոր հանդես է գալիս հասարակությունը: Բարոյական կամ բնական-իրավական մոտեցման համաձայն՝ իրավունքը դա զանազան իրավական գաղափարների և պատկերացումների, հայացքների ամբողջություն է, որն հիմնվում է բնական իրավունքի վրա: Իրավական նորմերը, որոնք սահմանում է պետությունը դա պոզիտիվ իրավունք է, սակայն բացի դրանից կա նաև



բնական իրավունք: Այս դեպքում որպես չափման միավոր հանդես է գալիս մարդը: Գոյություն ունի նաև չորրորդ ուղղությունը՝ ինտեգրատիվ, որը իր մեջ ներառում է վերոնշյալ երեք հայեցակարգերի տարրերը: Այստեղ ճանաչվում է իրավունքի նորմատիվ բնույթը, միաժամանակ թույլատրվում է դատավորների կողմից նորմերի ստեղծումը: Ճանաչվում են նաև մարդու բնական իրավունքները, ինչպիսիք են կյանքի իրավունքը, անձեռմխելիության իրավունքը և այլն: Այս տեսության կողմնակիցների կարծիքով, երեք դասական դպրոցները պետք է հրաժարվեն այն կարծիքից, որ միակ ճիշտը նրանք են և ճանաչեն սերտ կապը միմյանց միջև:

Իրավահասկացողության տիպաբանությունը, այսինքն՝ իրավունքի մեկնաբանության տարբեր տեսակների որոշակի դասակարգումը և դրանց բաժանումը միատիպ խմբերի կարելի է իրականացնել տարբեր հիմքերից (չափանիշներից) ելնելով:

Իրավունքի փիլիսոփայության առարկայի սահմանման տեսանկյունից նշանակալի դեր ունի իրավահասկացողության հետևյալ երեք տիպերի առանձնացումը՝ լեգիստական կամ լեգիզմ, բնաիրավական, ազատական-իրավաբանական:

Իրավահասկացողության լեգիստական տիպին բնորոշ է իրավունքի՝ որպես պաշտոնական իշխանության կամքից և կամայականությունից անկախ որոշակի օբյեկտիվ իրականության և օրենքի՝ որպես իշխանությունների հարկադիր ու պարտադիր հաստատման նույնականացում:

Համաձայն լեգիզմի՝ իրավունքը պետության կամավոր արդյունքն է, դրա հրամայականը (հարկադիր հաստատում, կանոն, ակտ, նորմ): Լեգիզմի և ընդհանրապես իրավաբանական պոզիտիվիզմի բնորոշ են մարդու և քաղաքացու իրավունքների անտեսումը, իշխանությանը գովաբանելը և դրա նորմատիվ ստեղծագործ հնարավորությունների գերաճը: Այս իմաստով լեգիզմը իրենից ներկայացնում է ավտորիտարիզմի նորմատիվ արտացոլում:

Նոր շրջանում լեգիստական մոտեցումը հիմնավորել է Թ. Հոբբսը, ով Լեվիաֆան արտյուսիստական պետության ջատագով էր: «Օրենքի իրավական ուժը, նշում էր նա, կայանում է միայն նրանում, որ այն գերիշխողի

հրամայականն է» [Гоббс Т. Левиафан. М., 1935, стр. 214]: «Օրենքի» հասկացության տակ այդ դեպքում նկատի է ունենվում գործող (պոզիտիվ) իրավունքը: «Իրավաբանական պոզիտիվիզմի» հիմնական գաղափարներին են դասվում օրենքի՝ որպես իշխանության արարման մեկնաբանումը, իշխողական պարտադրումը՝ որպես իրավունքի միակ տարբերակիչ առանձնահատկություն, իրավունքի վերլուծության ֆորմալ-տրամաբանական և իրավաբանական-դոգմատիկ մեթոդները, իրավունքի էության, բնության, պատճառների, արժեքների և այլնի վերաբերյալ տարատեսակ «մետաֆիզիկական» դիրքերից իրավունքի մասին տեսության «գտումը»: Նմանատիպ պատկերացումները 19-րդ դարում զարգացրել են Գ. Օսթինը, Շ. Ամոսը և այլոք Անգլիայում, Բ. Վինդշայդը, Կ. Հերբերտը, Կ. Բերգրոբը, Պ. Լաբանդը, Ա. Յիտելմանը և այլոք Գերմանիայում, Կաբանտուն և այլոք Ֆրանսիայում, Ե. Վ. Վասկովսկին, Ա. Խ. Գոլմստեն, Գ. Գ. Գրիմը, Ս. Վ. Պալմանը, Գ. Ֆ. Շերշենվիչը և այլոք Ռուսաստանում: 20-րդ դարում այդ մոտեցումը ներկայացված է «իրավաբանական նեոպոզիտիվիզմի» այնպիսի ուղղություններով, ինչպիսիք են Վ. Գ. Կոտկովի «ընդհանուր իրավագիտությանը բարեփոխված իրավագիտությունը», Գ. Կելզենի «իրավունքի մասին մաքուր տեսությունը», Գ. Հարթի «իրավունքի հայեցակարգը» և այլն: Անգլիական վերլուծողական իրավագիտության անվանի ներկայացուցիչներից մեկը՝ Գ. Օսթինը, իր «պոզիտիվ իրավունքի փիլիսոփայության» մասին աշխատությունում իրավունքը բնորոշել է որպես «կանոնների ազդեցատ, որոնք սահմանվում են քաղաքական ղեկավարության կամ սուվերենի կողմից» և նշում էր, որ «ցանկացած իրավունք հրաման է, կարգադրություն» [Austin J. Lectures on Jurisprudence or the Philosophy of Positive Law. L., 1873, p. 89, 98]:

Շ. Ամոսը նույնպես պնդում էր, որ «իրավունքը պետության գերագույն քաղաքական իշխանության հրամանն է տվյալ հասարակությունում անձանց գործողությունները կառավարելու նպատակով» [Amos Sh. A systematic View of the Science of Jurisprudence. L., 1872, p. 73]:

Գ. Ֆ. Շերշենվիչը կողմնակից էր նման հայեցակետերի: Նա գրում էր. «Իրավունքի



ցանկացած նորմ հրաման է» [Шершеневич Г.Ф. Общая теория права. М., 1910, вып. 1.С. 281]: Նրա գնահատմամբ իրավունքը այն սկզբնական փաստն է, որից բխում են իրավունքի նորմերը (նույն տեղը էջ 314): Իր հրամանով պետական իշխանությունը ստեղծում է իրավունք, այդպիսինն է իրավահասակագողության տվյալ տիպի համոզմունքը: Այս տեսանկյունից այն ամենը, ինչ հրամայում է իշխանությունը, իրավունք է: Լեգիզմը (իր բոլոր տարբերակներով, սկսած հին լեգիզմից մինչև իրավաբանական պոզիտիվիզմի ժամանակակից վերլուծողական և նորմատիվ հայեցակարգեր) նույնականացնում է իրավունքը և օրենքը, անջատում է օրենքը որպես իրավական երևույթ իր իրավական էությունից, ժխտում է օրենքի օբյեկտիվ իրավական առանձնահատկությունները, հատկանիշները, մեկնաբանում է այն որպես օրենսդիր իշխանության կամքի կամ կամայականության առարկա: Այդ իսկ պատճառով իրավունքի յուրահատկությունը, որի տակ պոզիտիվիստները նկատի են ունենում օրենքը (պոզիտիվ իրավունք), անխուսափելիորեն հանգեցվում է իրավունքի հարկադիր բնույթին: Ընդ որում, իրավունքի այս հարկադրությունը մեկնաբանվում է ոչ թե որպես իրավունքի որևէ օբյեկտիվ հատկանիշների և պահանջների արդյունք, այլ որպես նախնական իրավաստեղծ և իրավավճիռ գործոն, որպես իրավունքի ուժային սկզբնաղբյուր: Ուժը (իշխանության ուժը) այստեղ հիմնում է ուժային, հրամայական իրավունք: Լեգիստական գրականության մեջ լայն տարածում է գտել իրավունքի հասկացության սահմանում որպես պետության կողմից հաստատված և կանոնակարգված նորմերի համակարգ, որոնք ապահովված են դրա հարկադիր ուժով: Այն, որ պաշտոնապես գործող իրավունքի դիրքերը կամ նորմերը հաստատված են պետության կողմից և ապահովված են պետական հարկադրությամբ, ճիշտ է, սակայն սա բավական չէ իրավունքի պատշաճ հասկացության համար, քանի որ մնան լեգիստական սահմանման մեջ չկա ոչ մի չափանիշ, որպեսզի տարբերակենք իրավունքը կամայականությունից, իրավական նորմը իշխանության կամայական դիրքից, իրավական օրենքը հախիրավական օրենքից:

Իրավահասակագողության բնաիրավական

տիպի զանազան հայեցակարգերի տարբերակող նշանակությունը հանգեցնում է բնական իրավունքի և պոզիտիվ իրավունքի:

Նմանօրինակ տարբերակումն անցյալի և արդի ժամանակաշրջանի տարբեր հայացքների համակարգերում արտահայտվում է տարբեր ձևակերպումներով և տերմիններով: Օրինակ՝ բնական իրավունքը հաճախ մեկնաբանվում է որպես բնականոն իրավունք, անփոփոխ և իսկական իրավունք, որպես բանական և փիլիսոփայական իրավունք, որպես իրավունքի գաղափար, որպես սեփական իմաստով իրավունք, որպես ճշմարտացի իրավունք և այլն:

Համապատասխանաբար և պոզիտիվ իրավունքն ունի տարբեր իմաստներ՝ արհեստական (ոչ բնական) իրավունք, մարդկային, որպես կամային իրավունք, փոփոխական իրավունք, պայմանական իրավունք, անիրական իրավունք և այլն:

Բնաիրավական մոտեցման կողմնակիցների համար բնական իրավունքը (դրա կրոնական կամ աշխարհիկ դրսևորմամբ իրավունքի փիլիսոփայության, իրավագիտության, էթիկայի, սոցիալական փիլիսոփայության և այլ տեսանկյուններից) որպես միակ իրական, բանական, բարոյական և արդարացի իրավունք, տրված է հենց բնության կողմից և արմատավորվում է օբյեկտիվ բնության մեջ, Աստծո կամ մարդու էության մեջ, ֆիզիկական, հոգևոր կամ սոցիալական էության մեջ, «առարկաների էության» մեջ և այլն:

Չանազան բնաիրավական հայեցակարգերի հեղինակներ տարբեր ձևով են պատկերացնում բնական իրավունքի կոնկրետ բովանդակությունը՝ ինչպես է բնական իրավունքը մեկնաբանում այնպիսի տարատեսակ երևույթներ, ինչպիսիք են բնական հավասարությունը և բոլոր մարդկանց ազատությունը, բնական իրավունքն անհավասարության և արտոնությունների նկատմամբ, մարդկանց արժանապատվության բնական իրավունքը, մարդու այս կամ այն անօտարեի իրավունքները և ազատությունները և այլն:

Պոզիտիվ իրավունքն, ընդհակառակը, բնաիրավական հայեցակարգերի հեղինակների կողմից դիտարկվում է որպես շեղում (անտեսում, աղավաղում, ժխտում և այլն) բնական իրավունքից, որպես մարդկանց (պաշտոնական իշխանությունների) արհես-



տական, սխալական և կամայական դիրքորոշում:

Բնաիրավական մոտեցմանը բնորոշ են ինչպես տեսական և գործնական կարգի արժանիքներ (իրավունքի օբյեկտիվ էության փնտրտուքներ, մարդկանց բնական հավասարության և ազատության, մարդու անօտարելի իրավունքների և ազատությունների, իրավական պետության գաղափարների հայտարարումը և այլն), այնպես էլ թերություններ (իրավունքը խառնելը ոչ իրավական երևույթների հետ - բարոյականությանը, կրոնին և այլն, պաշտոնական-իրավականը՝ փաստացի-բովանդակայինին, պոզիտիվ իրավունքի նկատմամբ անուշադրությունը, բնական և պոզիտիվ իրավունքների միջև անհրաժեշտ փոխադարձության բացակայությունը և այլն):

Բնական իրավունքը նման կերպով ոչ թե բնական տրված, այլ բնականոն գործող իրավունք է: Այստեղից էլ բխում է բնաիրավական հայեցակարգերին բնորոշ իրավական դուալիզմը՝ իրավունքի համատեղ գործող երկու համակարգերի պատկերացումը (բնական իրավունքի և պաշտոնական իրավունքի):

Բնաիրավական մոտեցման համախոհներին հետաքրքրում է ոչ այդքան պաշտոնապես գործող պոզիտիվ իրավունքի կատարելագործումը, որքան իրավական էությունը: Բնաիրավական մոտեցման շրջանակներում բացակայում է իրավական օրենքի սեփական հասկացությունը, քանի որ բնաիրավական էությունը արդեն արտացոլված է բնաիրավական երևույթում: Այդ իսկ պատճառով անհնարին է պետական կարգով դրականացնել (պաշտոնապես ընդունել, արտահայտել կամ ամրագրել պոզիտիվ իրավունքի դիրքերում) որոշակի բնաիրավական էություն, որն առանձնացված չէ բնաիրավական երևույթից:

Չի կարելի, օրինակ, ըստ բնաիրավական մոտեցման, ձգտելով սահմանել իրավական օրենքի հասկացությունը՝ ասել, որ իրավունքը բնաիրավական էության համապատասխան նորմերի համակարգ է, որը հաստատվում է կամ կանոնակարգվում է պետության կողմից կամ ապահովվում է պետական հարկադրությամբ, քանի որ, համաձայն բնաիրավական տրամաբանության, անհրաժեշտ է դրականացնել (պաշտոնապես ճանաչել, կանոնակարգել, վեր հանել համընդհանուր պարտա-

դիր օրենք) ամբողջովին տվյալ բնական իրավունքը և ընդհանրապես (որպես էության և երևույթի անքակտելի միություն), այլ ոչ թե միայն առանձին բնաիրավական էությունը, որը, որպես այդպիսին, բնաիրավական երևույթից անբաժանելի է: Դա նշանակում է, որ օրենսդիր մարմինը իրավական օրենքում պետք է՝

1. ամրագրի բնական իրավունքի որոշակի դիրքերի ցանկը,
2. վավերացնի (այսինքն՝ պաշտոնապես ընդունի դրանց իրավաբանական ուժը) բնական իրավունքի այլ ընդունված (բայց այդ ցանկում չընդգրկված) նորմեր,
3. ընդունել բնական իրավունքի ուղղակիորեն ամրագրված կամ վավերացված նորմերը պոզիտիվ իրավունքի բոլոր այլ աղբյուրների և նորմերի դիմաց,
4. ամրագրել տպագրվող ակտերի և նորմերի իրավաբանական արժեզրկումը, որոնք ժխտում են բնական իրավունքի համապատասխան դիրքորոշումները և արգելել դրանք:

Իրավահասկացողության ազատական-իրավաբանական տիպի հիմքում ընկած է պաշտոնական հավասարության գործունը: Իրավահասկացողության ազատական-իրավաբանական տիպն իր մեջ ներառում է ոչ միայն իրավունքի հասկացությունը, այլ նաև պետության իրավական հասկացողությունը՝ որպես պաշտոնական հավասարության սկզբունքի արտահայտման և գործածության ինստիտուցիոնալ ձև, որպես համընդհանուր հասարակական իշխանության կազմակերպման իրավական ձև:

«Հավասարություն» հասկացությունը իրենից ներկայացնում է որոշակի արատակցիա, այսինքն՝ հանդիսանում է արդյունք այն տարբերությունների գիտակից վերացարկման, որոնք բնորոշ են հավասարեցվող օբյեկտներին: Հավասարեցումը ենթադրում է հավասարեցվող առարկաների տարբերություն և միաժամանակ այդ տարբերությունների ոչ շոշափելի բնույթ:

Տարբեր մարդկանց՝ իրավական հավասարեցման հիմք և չափանիշ է հանդիսանում անհատի ազատությունը հասարակական հարաբերություններում, որը ճանաչվում և հաստատվում է նրա իրավասուբյեկտության ձևով:



ԼՂՀ դատական իշխանություն

Պաշտոնական հավասարությունը որպես իրավունքի էություն և սկզբունք ներառում է երեք փոխկապակցված, փոխադարձաբար լրացնող և ենթադրող բաղկացուցիչ տարրեր, իրավունքի երեք էական առանձնահատկություններ՝

1. համընդհանուր հավասար չափ կամ նորմ,

2. այդ կարգավորվող չափի բոլոր հասցեատերերի պաշտոնական ազատություն,

3. այդ բոլորի համար համահավասար կարգավորման ձևի համընդհանուր արդարություն:

Իրավահասկացողության ազատական-իրավաբանական տեսության շրջանակներում էության և երևույթի փոխադարձ կապը իրավունքի մեջ կրում է անհրաժեշտ և օրինաչափ բնույթ: Օբյեկտիվ իրավական էությունը կամ ֆորմալ հավասարությունը հանդիսանում է որոշակի իրական իրավական երևույթի էություն, իսկ իրավական երևույթը դա հենց միայն տվյալ որոշակի էության երևույթն է:

Միայն իրավական էության և երևույթի նման անհրաժեշտ կապի հիմքի վրա և այն հաշվի առնելով է հնարավոր հասնել փնտրվող միասնության իրավական օրենքի տեսքով, այսինքն՝ պետության կողմից սահմանվող և պաշտոնապես գործող համապարտադիր պոզիտիվ իրավունք, որն արտահայտում է պաշտոնական հավասարության սկզբունքը:

Այս մոտեցումն արտահայտում է տեսականորեն ավելի զարգացած իրավահասկացողության հայեցակարգ և իրավունքի փիլիսոփայություն՝ համեմատած մյուս երկու մոտեցումների հետ: Այդ մոտեցումը անվանվում է ազատական-իրավաբանական կամ ազատական, քանի որ, համաձայն պրոֆեսոր Վ.Ս.Ներսիսյանցի մեկնաբանման, իրավունքը՝ մարդկանց ազատության համընդհանուր և անհրաժեշտ գործոն է, իսկ ազատությունը հասարակական կյանքում հնարավոր է և վավեր միայն որպես իրավունք: Ազատական հասկացողության համաձայն՝ ազատությունը լոկ իրավական անհրաժեշտ միմիմում է, առանց որի չկա և չի կարող լինել իրավունք ընդհանրապես, ներառյալ և իրավական օրենքը:

Այսպիսով, տիպաբանության նշանակությունը պայմանավորված է նրանով, որ հենց

իրավահասկացողության որոշակի տիպն է որոշում իրավունքի և պետության համապատասխան փիլիսոփայական իմացության պարադիգման, սկզբունքն ու օրինակը (իմաստային մոդել), տեսական-իրավական բովանդակությունը, իրավունքի փիլիսոփայության համապատասխան հայեցակարգի առարկան և մեթոդը:

1. Берман Г.Дж. “Западная традиция права: эпоха формирования” М. 1998. 624ст.

2. И.И.Кальной Философия права, Симферополь, 2004.160 ст.

3. С.В. Моисеев Философия права Новосибирск, 2003. — 203ст.

4. Нерсесянц В. С. Философия права: Учебник для вузов. — М.: Норма, 2005. — 656 ст.

5. Rudoxs.exdat.com

6. Yourlib.net

7.Web-docal.rudn.ru: